նալք են մտածում որ և է կերպով հանգանակութիւն անելու նոցա համար։ Այսպէս ես մենք Թիֆլիս քաղաքի այլ և այլ ուսումնարանում ուսանող պատանեակներս, երբ դարձանք հայրենիք այս ամառվայ արձակուրդին, և այնտեղից Ուռավել ասուած հանքային ջուրը, որ Ախալցխայի արևելա-հարաւամասնումն է գտնվում երեք ժամ հեռաւորութեամբ, նոյն տեղում խորհեցանք մեր մանկական զբօսանաց ժամանակ ևս մեր թշուառ եղբայրներին մեր կարողութեան չափով օգնութիւն հասցնել։ Այս դիտաւորութեամբ մի ստորագրութիւն բացեցինք և հաւաքեցինք երեսուն րուբլի, և մի օր յետ ստորագրող անձանց շնորհակալութիւն տալու նպատակաւ մի ընտանեկան ներկայացումն տուինք «փողի պակասութիւն» և «Երկու քաղցածներ»։

Ինձ հետ մասնակցող այն ներկայացման պարոնների անուններն են Բ. Շահզինարեանց, Տ. Յակոբջանեանց, Կ. Գլթճեանց, Գ. Սաֆարեանց։ Պ. խմբագիր, խնդրում եմ ընդունէք այս երկտողիկ գրութիւնս ձեր պատուական լրագրի մէկ անկիւնում ի գիտութիւն հասարակութեան։

Արշակ Պուտուղեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

10 օգոստոսի

Ուղարկում եմ ձեզ ինն րուբլի Հայաստանի սովատանջներին հասցնելու համար, որը նուիրել են մի քանի բարեմիտ տիկիններ։ Խնդրեմ հասուցանէք ինչպէս հարկն է։ Նուիրատու տիկինները սրանք են. Եղիսաբէթ Մելիք-Դադաեանց 3 ր., Սոֆիա Մելիք-Դադայեանց 3 ր. Աննա Յարութիւնեանց 2 ր., Խանում Աբրահամեանց 1 ր.։ Գումարը 9 րուբլի։

Խաչատուր Մելիք Դադայեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Յուլիսի 29

Թիֆլիսի Շաւի-գիւղ անուանված թաղի Լուսաւորիչ եկեղեցու, հիմնվելու օրից երեցփոխանութեան պաշտօն վարել է պ. Աւետիք Իշխանեանց, առանց ժողովրդի ընտրութեան, մինչև ներկայ ժամանակներս, բայց հաշիւ չէ տուել երբէք, չը նայելով ժողովրդի բազում պահանջներին։ Պատճառներ անպակաս են յիշեալ երեցփոխանին, որոնք ամենևին կապ չունեն գործի հետ։ Երբ ժողովուրդը պահանջում է հոգևոր կառավարութիւնից տուած ժապաւինեալ մատեանները, նա չէ ներկայացնում, այլ նրա բոլոր հաշիւները գրված են կտոր թղթերի վրա. վերջապէս ժողովուրդը ճարահատեալ դիմեց խնդրագրով Թեմիս կոնսիստորիային, գործին ընթացք տալու համար, որը ներկայ ամսիս 27-ին ուղարկեց արժանապատիւ տէր Կարապետ քահանայ Տէր-Սարգսեանցին հաշիւ պահանջելու պ. Իշխանեանցից և եկեղեցու քահանայից։ Այդ օրը պ. Իշխանեանցին չը գտան, թէպէտ շատ որոնեցին ամենայն տեղ. իսկ ծխական քահանայ տէր Պետրոս Երանոսեանցի տուած հաշուի թղթերը նման էին մի մանրավաճառի մրոտած թղթերին, որոնք տեսնելով տէր Կարապետ քահանան պահ տուեց մի հաւատարիմ անձի։ Հրաւիրում ենք հոգևոր կառավարութեան անաչառ ուշադրութիւնը գործի վրա, առանց ուշացնելու, որովհետև եկեղեցին քանդվելու վրա է. խօսքիս վկայ եմ բերում այն, որ մեծ պասի ժամանակ ժողովուրդը անձրևի պատճառով անձրևակալներով էր կանգնած եկեղեցու մէջ։ Բայց թէ ինչպէս կանցնի այդ հաշւեպահանջութիւնը, պարտք եմ համարում միւս անգամ գրել։

Գէորգ Թարխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վաղը, օգոստոսի 27-ին, Արծրունու թատրոնում լինելու է մի կօնցէրտ տիկին Դէկէր-Շէնկի մասնակցութեամբ յօգուտ մի հայ օրիորդի, որ գնալու է Ս.-Պետերբուրգ երգեցողութեան արհեստի մէջ կատարելագործվելու համար։

—

ՀԱՄԶԱՉԻՄԱՆԻՑ մեզ գրում են, թէ տեղային հասարակութիւնը բաւական ծախք անելով շինեց մի նոր եկեղեցի, թէև հին եկեղեցի ունէր արդէն, որը այժմ բոլորովին թող տրված, ծառայում է որպէս անասնանոց։ Իսկ տեղային դպրոցը չափազանց թշուառ դրութեան մէջ է. վարժապետը մի տարուց աւելի ծառայում է, բայց ռոճիկ չը ստանալով, ստիպված եղաւ դիմել հաշտարար դատաւորին և գանգատվել դպրոցի հոգաբարձութեան վրա։

—

ԴՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են որ այնտեղ այցելեց Թիֆլիսում կազմվելու հնագէտների ժողովի անդամ պ. Զէյդլից. երեք օր մնալուց յետոյ ճանապարհորդեց Շահդաղի շրջակայքը հետազօտելու համար, տանելով իր հետ մի լուսանկար։ Նամակագիրը աւելացնում է, որ պ. Զէյդլից շատ գոհ է մնացել իր յաջող հետազօտութիւններով, և հանել է զանազան հետաքրքիր պատկերներ Շահդաղի տեսարաններից և մինչև 100-ի չափ պատկերներ տեղային ժողովրդի տիպերից։ Նա ուշադրութիւն է դարձրել և մի քանի ցեղերի բարբառների վրա, կազմելով նրանց լեզուից բառարան։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են, թէ մի աղջիկ և մի տղայ երկու տարի շարունակ սիրելիս են եղել միմեանց և յարաբերութիւններ են ունեցել. վերջը տղան նկատելով, որ աղջկայ ազգականները արգելում են իրանց ամուսնութիւնը, փախցնում է աղջկան։ Այժմ երիտասարդի դէմ գանգատ է սկսված և աշխատում են պատժի ենթարկել նրան, չը նայելով, որ աղջիկը խոստովանվում է, թէ ինքը յօժարութեամբ է գնացել երիտասարդի հետ, որին վաղուց սիրում էր։

—

Մեզ գրում են ՀԱՄԱՄԼՈՒԻՑ, որ այդտեղ եկաւ մի ծերունի եպիսկոպոս, որին կոչում էին Պապիկ սրբազան։ Տեսնելով տեղային դպրոցի թշուառ դրութիւնը, սրբազանը իր քարոզներով կարողացաւ համոզել ժողովրդին, որ մի բարեկարգ դպրոց հիմնեն։ Ստորագրութիւն բացվեցաւ դպրոցի անունով և մինչև 1500 ր. հանգանակութիւն եղաւ։ Սրբազանը ստորագրութիւն առաւ քահանաներից, պարտաւորացնելով նրանց ամեն կիրակի պատարագ մատուցանել, որ այս գիւղում խիստ հազիւ է պատահում։

—

Մեզ գրում են, թէ ներկայ տարվայ մարխի առիթով մի քանի պարոններ ԹԻՖԼԻՍԻ Հայ փողոցում նուիրատւութիւններ հաւաքեցին, որ գոյացաւ մի նշանաւոր գումար, որը պէտք ծախսվէր մարդիկ ուղարկելու և Սուրբ Յակոբ աղբիւրից ջուր բերելու։ Մինչև այժմ յիշեալ պարոնները հաշիւ չը ներկայացրին. արդեօք ինչ արեցին իրանց հաւաքած նուիրատւութիւնների հետ։

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. պ. պ. Մկրտիչ և Աղէքսանդր Արաբաջեանները մտադիր են շուտով բացանել մի օրիորդական ծխական դպրոց, բաղկացած երկու դասատուններից։ Այս դպրոցում կընդունվեն մինչև 40 աշակերտուհիներ տարեկան 12 ր. վճարով։ Դպրոցի նպատակն է նախապատրաստել սանուհիներ Արղութեան օրիորդաց դպրոցի համար։ Աւանդելու առարկաների ծրագիրը մի և նոյնը կը լինի, որ ընդունված է Արղութեան դպրոցի նախակրթարաններում։

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Այժմ մեզ մօտ թխած հացը առաջին տեսակի ծախվում է 6½ կոպէկ, երկրորդ տեսակի 5 կոպէկ։ Ածուխին նշանակված է պուդը 70 կոպէկով ծախելու, բայց ծախվում է 90 կոպէկ։ Ալիւրը ծախվում է 2 ր. 30 կոպ., մինչև 2 ր. 60 կ., իւղ և պանիր համարեա բոլորովին չը կայ»։

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Մեր գաւառի մէջ աւազակութիւնը և սպանութիւնները, սկսել են սաստիկ յաճախ կրկնվել։ Աւազակները Թուրք ազգաբնակութեան շրջանից են դուրս գալիս գլխաւորապէս։ Այժմ այդ աւազակները մեծ մասամբ զինուորված են լինում Թիւրքիայից բերած նոր ձևի հրացաններով և այդ պատճառով աւելի էլ համարձակ են դարձել իրանց արշաւանքների մէջ»։

—

Մեզ գրում են ՂԱՐՍԻՑ, որ այն կողմերը բերվող հացը մեծ մասամբ Աղէքսանդրապօլի գաւառիցն է, որովհետև Ղարսի նահանգում այս տարի չը կան ցորենի ցանքեր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Փարիզից։

Հասարակական կարծիքը դեռ ևս զբաղված է ֆրանսիական երեք նախագահների այցելութեամբ Շերբուր քաղաքին։ Քանի որ ամենքը համաձայն են, որ Դրևվի իրան անբիծ էր պահում և երբէք չէր մոռանում սահմանադրական նախագահի դերը, շատերը անպայման պախարակում են Գամբետտայի վարմունքը։

Մի քանի հանրապետական լրագիրներ յայտնում են, որ Գամբետտա միայն ձևացնում էր, թէ չէ կամենում իր դրութենից աւելի բարձր երևալ, բայց իսկապէս աշխատում էր, որ իր համար կատարվեն ժողովրդական բոլոր ցոյցերը։ Օրինակ, քաղաք հասնելու առաջին օրը քանի որ Դրևվի ոտքով զբօսնում էր, Գամբետտա բաց կառքով անցաւ ամենաբազմամարդ փողոցով և ամբոխի շատութենից օգուտ քաղելով, կառքի մէջ կանգնած մի ճառ արտասանեց։ Գամբետտայի վարմունքը լրագիրներից շատերը այդպէս են մեկնում։

Քանի որ Դրևվի և Գամբետտա Շերբուրի մէջ ազատամիտ ճառեր էին արտասանում, Փարիզում մինիստրների խորհուրդի վճռի համեմատ կալանաւորվեցաւ «Triboulet» ծաղրական թերթի խմբագիրը և 24 ժամվայ ընթացքում արտասահման ուղարկվեցաւ։ Կառավարութեան այդ կարգադրութենից վրդովված է հանրապետական ամբողջ մամուլը։ Նրանցից շատերը յայտնում են, թէ հանրապետական կառավարութիւնը նոյն ուղղութեամբ է գործում, ինչպէս որ Նապօլէօն III-ի կառավարութիւնը։ Եթէ Ֆրէյսինէի մինիստրութիւնը սկսէ արտաքսել ֆրանսիական լրագիրների աշխատակիցներին, օտարազգի թղթակիցների դրութիւնը Փարիզի մէջ անտանելի կը դառնայ։

Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը դարձեալ հետաքրքիր է դառնում։ «Republique Française» լրագիրը որ ամբողջ ամսվայ ընթացքում արտաքին քաղաքականութեան հարցերը բոլորովին չէր քննում, հիմա փոխել է իր ընթացքը։ Լրագիրը մի շարք յօդուածներ տպեց, որոնցով յայտնում է, թէ ինքը չէ հաւատում ոչ ռուս դիպլօմատների խարդախութեանը և ոչ եւրոպական խաղաղութեանը սպառնող վտանգին արևելեան հարցի պատճառով։ Լրագիրը ասում է. «առաջ մենք իւրաքանչիւր օտարազգուն լրտես էինք համարում, իսկ այժմ արտաքին քաղաքականութեան իւրաքանչիւր հարցը եւրոպական պատերազմի առիթ ենք համարում»։

Ֆրանսիայի և Իտալիայի յարաբերութիւնները հետզհետէ լարվում են Տունիսի մէջ պատահած անբաւականութիւնների պատճառով և թէպէտ դրանց այժմ մեծ նշանակութիւն չեն տալիս, այնուամենայնիւ ժամանակով կարող են պատերազմի առիթ դառնալ։

Օգոստոսի 19-ին ֆրանսիական առաջին մինիստր Ֆրէյսինէ մի ճառ խօսեց Մօնտօբանի մէջ, որով յիշեց այն յաջողութիւնները, որ ունեցան հանրապետականները քաղաքային խորհրդարանների անդամների ընտրութեան ժամանակ և յոյս յայտնեց, թէ հին կուսակցութիւնների մնացորդները կը մտնեն հանրապետականների շարքը։ Նրանք հանրապետականներից լաւ ընդունելութիւն կը գտնեն, եթէ իսկապէս կը ցանկանան աշխատել ընդհանուր գործի համար։ Այդ ընտրութիւնները, Ֆրէյսինէի կարծիքով, հաստատում են, որ երկիրը կամենում է հեռու մնալ չափա-

---

վել նրանից, որովհետև առանց նրա դուք չէիք կարող ապրել երկու օրից աւել, սակայն ժողովեցէք ազնիւ ճանապարհով, ժողովեցէք և օգտվեցէք ժողովածներից, ժողովեցէք ապրելու և ոչ ժողովածներդ պաշտելու համար, ժողովեցէք, բայց այնուհետև մի սպանէք ձեր մէջ մարդկութեան սրբազան պարտաւորութիւնքը. ժողովեցէք ոչ թէ միայն սնդուկներումդ դարսելու և օրը տաս անգամ նրա առաջ մոմ վառելու ու երկրպագութիւն տալու համար, այլ ապրելու պատուաւոր կերպով, չը զրկելու ձեր անձը, չը զրկելու ձեր ընտանիքը, որդիքը, որոնք, չը նայելով ձեր սնդուկների հազարներին, արեգակի կիզիչ ճառագայթների տակ, փողոցների հրաշէկ քարերի վրա ոտնաբոբիկ են ման գալիս։ Նայեցէք ահա ձեր այդ օրինակելի աղային, որի քառասուն հազար մանէթը ձեր աչքն է շլացնում։ Ձեզ լաւ յայտնի է, թէ ինչ անազնիւ, ցած ճանապարհներով է նա ժողոված այդ գումարը։ Ձեզ լաւ յայտնի է աղայի ցածահոգի, ստոր բնութիւնը. դուք գիտէք, որ նա թէև երկրպագուներով շրջապատված է, սակայն չէր խնայի իր հօր գերեզմանն անգամ մի կոպէկի համար, բայց էլի դուք, մամօնայի ցածահոգի ստրուկներդ, պաշտում էք, պատւում էք այդ մարդուն, զմայլվում էք նրա վրա, օվսաննայ էք երգում նրա սնդուկի առաջ. դուք մինչև երկինք էք բարձրացնում նրան, տերևի նման խոնարհվում էք նրա առաջ, ինչու, որովհետև նա փող ունէ։ Բայց ձեզ ինչ, պարոններ, նրա փողից, միթէ դուք կարող էք մի կոպէկ անգամ օգուտ ստանալ նրանից, միթէ դուք չը գիտէք, որ նա հոգի կը տայ մի կոպէկի համար, որ նա զրկվում է իր ընտանիքից, որդկերանցից, որ գողանում է իր ազգականներից, բարեկամներից, որ օրը հարիւր անգամ Աստուծոյ, Քրիստոսի, Աստուածածնի և հազարաւոր սրբերի անուններով է երդվում մի կոպէկ աւելի ձեռք գցելու համար……

Բայց, սիրելի ընթերցող, ինչպէս երևում է դուք ցանկանում էք քարոզ կարդալ մեր քաղաքացու գլխին։ Ցաւում եմ ձեր ժամանակի կորստեան վրա։ Ձեր ջանքը ի զուր է բոլորովին։ Մեր քաղաքում լաւ մարդ միայն նա է, ով փող ունէ։ Մի մարդ որ տարիներով մեծ ճանապարհի վրա աւազակութիւն է արած, որ հարիւրաւոր կանայք այրի և հարիւրաւոր մանուկներ որբ է թողուցած, որ արեան և արտասուաց հեղեղներ է հոսել տուած և այդ հեղեղներով իրեն համար հարստութեան ճանապարհ հարթած, կարող է ազատօրէն մուտք գտնել մեր քաղաքի ամեն մի հասարակութեան մէջ, նրան ոչ ոք չի արտաքսի իր շրջանից, նրա փողը մի դիւթական գաւազանի նման ամեն տեղ կարող է ճանապարհ բաց անել իր առաջ, և նա կարող է դառնալ ամենապատուական մի անձն մեր քաղաքում։

Մի մարդ, որ իր հօր թողած մի քանի մանէթների վրա ամենաստոր և անազնիւ ճանապարհներով, չքաւորների փշրանքներից և որբերի վերջին պատառից ժողովելով մի քանի թումաններ է աւելացրած, որ ուսումնարանի գանձապահ է դառած և իր ստացած նաղդ փողերի տեղ դուրս գնալիս իր հօր հին, փտած, կորած բօսպիսկաները թողած ուսումնարանի համար, որ.... բայց զորն ասեմ կամ զորն խոստովանիմ, այդպիսի մի անհատ օրինակելի մի անձն է մեր քաղաքում, որովհետև կարողացել է օգտվել իր դրութենից և իր մէջքը ամրացնել։ Այդպիսի մի պարոն ճանաչվում է իր արժէքը մեր քաղաքում. նա չէ խօսում, չէ նստում, մինչև անգամ չէ բարևում իրենից փոքրներին, որովհետև այդպիսի մի ընթացք կարող էր անպատուել նրա պատիւը։ Նա իր ճարպիկութեամբ և աղուէսի խելքով կարողացել է մուտ գործել աւելի մեծերի մօտ. նա ծանօթ է քաղաքապետի, հաշտարարի, քննիչի և միւսի և միւսի հետ, որոնց անունով նա սովոր է վախ տալ անհնազանդ մամօնայապաշտներին։ Մի մարդ....բայց ինչ եմ երկարացնում, առէք մի հրէշ, կամ լաւ ևս մի երկայնականջ սև էշ, դրէք նրա վրա ոսկէ թելերով բանված մի թամք և թամքի վրայից կախէք մի քսակ, որի մէջ ամփոփված է մի քանի հազար մանէթ, հանեցէք յետոյ այդ էշը ականջից բռնած հասարակութեան մէջ և տեսէք թէ որքան մարդիկ ծունկ են չոքում նրա առաջ, ինչպիսի խնկարկութիւններ են անում նրան։ Թող զռայ այդ էշը և իսկոյն ամենքը կը լռեն, որ ուշադրութեամբ կարողանան լսել նրա քաղցրիկ ձայնը, որ գուցէ կարողանան գուշակել նրա ցանկութիւնը։

Բայց մի մարդ, որ ազնւութեամբ վարած է իր կեանքը, որ իր կենաց մէջ հարիւրաւոր կարօտեալների արտասուք է սրբած, որ հաւատարմութեամբ տարիներով ձրիաբար ծառայած է հասարակութեան օգտին, որ տարիներով վարած է ուսումնարանի հոգաբարձական պաշտօնը, որը մեծ աշխատանքով ու ջանքով տարիների ընթացքում յաջողութեամբ պահպանած և յառաջադիմած է մի քայքայեալ դպրոցի դրութիւն, որ ուսումնարանի փողը եռապատկած ու քառապատկած է, որ հազարաւոր թուք ու մուր է վեր առած, իր գործունէութեան մէջ ամենայիմար, տգէտ, ախմախ մի անձն է, որ չէ կարողացել օգտվել հանգամանքից և միասին կլանել թէ ուսումնարանի և թէ հասարակութեան փողը։ Ահա քաղաք, ահա հասարակութիւն։

Ա. Զախարեանց